


ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործառույթները ջրային ոլորտում



Ջրային ոլորտում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացնում է կարգավորում:

Կարգավորման հիմնական սկզբունքները

- կարգավորման իրականացումն ինքնուրույն պետական մարմնի կողմից,
- կարգավորվող մարմնի որոշումների ընդունման կոլեգիալությունը,
- կարգավորման թափանցիկության ապահովումը հասարակության համար,
- սպառողների կամ որևէ կարգավորվող անձի նկատմամբ խտրականության բացառումը,
- սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռումը,
- մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակների սամանափակումը:

Խմելու ջրի մատակարարի և սպառողների փոխահարաբերությունները կարգավորվում են [Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման \(կեղտաջրերի մաքրման\) ծառայությունների մատուցման կանոններով](#) (այսուհետ՝ Կանոններ), նույն օրվա [№379Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման \(կեղտաջրերի մաքրման\) ծառայությունների մատուցման՝ պայմանագրերի օրինակելի ձևերով](#), ինչպես նաև օրենքներով և այլ իրավական ակտերով:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձի (այսուհետ՝ Լիցենզավորված անձ) հիմնական պարտավորությունները

Լիցենզավորված անձը, համաձայն Հանձնաժողովի կողմից իրեն տրամադրված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի, պարտավոր է.

➤ ջրային համակարգով մատուցել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ) լիցենզիայով ամրագրված սպասարկման տարածքում: Լիցենզավորված անձի կողմից Ծառայությունների մատուցումը ներառում է հետևյալ գործառույթները՝

- 1) ջրային համակարգի կառավարում, շահագործում, պահպանում, բարելավում.
- 2) Հանձնաժողովի սահմանված օրինակելի ձևերին համապատասխան Ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում.
- 3) ջրային համակարգին բաժանորդների ներքին ցանցի միացում.
- 4) մատուցված Ծառայությունների հաշվառման կազմակերպում և ապահովում.
- 5) մատուցված Ծառայությունների դիմաց գումարների գանձում.
- 6) մակերևութային ջրերի հեռացման ստորգետնյա համակարգի շահագործում և պահպանում.
- 7) հակահրդեհային նպատակներով և ցայտադրյուններով ջրի ապահովում:

➤ ապահովել լիցենզիայով ամրագրված սպասարկման որակի ցուցանիշները.

➤ առևտրային հաշվառքի սարքի ձեռքբերումն ու տեղակայումն իրականացվում է Լիցենզավորված անձի կողմից վերջինիս հաշվին: Լիցենզավորված անձի կողմից նոր համակարգը կառուցելու դեպքում կառուցման ծախսերը Հանձնաժողովի կողմից սահմանված առանձին դեպքերում կարող են փոխհատուցվել նաև վարկային կամ ներդրումային ծրագրերի իրականացման միջոցով.

➤ ապահովել սպասարկման տարածքի բաժանորդներին հասանելի շուրջօրյա հեռախոսակապ.

➤ շուրջօրյա հեռախոսակապի միջոցով բաժանորդի դիմելու դեպքում իրազեկել առնվազն իր սպասարկման գրասենյակների և էլեկտրոնային կապի հասցեների մասին, որոնցով բաժանորդը կկարողանա տեղեկատվություն հաղորդել կամ ստանալ դիմումների, դրանց ընթացքի, ջրամատակարարման ընդհատումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած ջրի արժեքի և քանակության, վճարման ժամկետների, ջրի որակի, լիցենզավորված անձի և բաժանորդի իրավունքների, պարտականությունների և այլնի վերաբերյալ.

- պատշաճ ուսումնասիրել բաժանորդներից ստացված բոլոր դիմումները.
- ընդունել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր (այդ թվում՝ հեռախոսակապի միջոցով) և էլեկտրոնային փոստով հղված դիմումները, եթե [Կանոններով](#) առանձին ընթացակարգ սահմանված չէ.
- բաժանորդի դիմումին պատասխանել այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե առանձին դեպքերի համար օրենքներով կամ [Կանոններով](#) այլ ժամկետ սահմանված չէ.

Հանձնաժողովի կարգավորման դաշտում խմելու ջրի մատակարարման ոլորտում ներկայումս գործունեություն է իրականացնում [«Վեոփա Զուր» ՓԲԸ-ն](#): Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձանց համար Ծառայությունների մատուցմանն առնչվող սպասարկման որակի ցուցանիշները սահմանված են [Կանոններով](#):

[Կանոններով](#) սահմանված խմելու ջրի ոլորտում Ծառայությունների մատուցման համար ներկայացվող սպասարկման որակի ցուցանիշներն են.

1. ջրամատակարարման տևողությանն առնչվող ցուցանիշները,
2. ջրամատակարարման ընդհատմանը և Ծառայությունների մատուցման դադարեցմանն առնչվող ցուցանիշները,
3. շուրջօրյա հեռախոսակապին և Լիցենզավորված անձի պաշտոնական կայքին առնչվող ցուցանիշները,
4. դիմումի ներկայացմանը և քննարկմանն առնչվող ցուցանիշները:

[Կանոններով](#) սահմանվել են նաև.

1. Լիցենզավորված անձի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր բաժանորդի միացման կարգը,
2. Լիցենզավորված անձի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 1-ի N 658-Ն որոշմամբ սահմանված կարգով խմելու ջրի ապօրինի սպառում և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործում հայտնաբերվելու դեպքում ժամանակավոր պայմանագիր կնքելու կարգը,
3. առևտրային հաշվառքի սարքի ապահովաքակցման, տեղակայման և սրուգաչափման կարգը,

4. մատուցված Ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի հաշվարկման ու վերահաշվարկման և վճարման կարգը,
5. պատասխանատվությունը [Կանոնների](#) պահանջների խախտման համար:

Ջրամատակարարման տնտեսությանն առնչվող ցուցանիշներ.

Որպես ջրամատակարարման տնտեսության նվազագույն ցուցանիշ սահմանված է, որ Լիցենզավորված անձը պարտավոր է բաժանորդին ապահովել ամենօրյա ջրամատակարարմամբ: Ընդ որում, բաժանորդն իր ջրամատակարարման գրաֆիկին կարող է ծանոթանալ թերթից, մատակարարի պաշտոնական կայքից, ինչպես նաև նախորդ ամսում սպառված ջրի դիմաց տրամադրվող վճարման փաստաթղթից: Լիցենզավորված անձն իր սպասարկման տարածքի ջրամատակարարման գրաֆիկները հրապարակում է տարեկան առնվազն երկու անգամ ապրիլ և սեպտեմբեր ամիսների 15-25-ն ընկած ժամանակահատվածներում, բաժանորդներին հասու առնվազն մեկ օրաթերթում, որոնցից առաջինը գործում է տվյալ տարվա մայիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ, իսկ երկրորդը՝ հոկտեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ: Լիցենզավորված անձն իրավունք ունի՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցնելով, ջրամատակարարման գրաֆիկը թերթի փոխարեն հրապարակել այլ տեղեկատվական միջոցով: Ջրամատակարարման գրաֆիկը պետք է կազմվի և հրապարակվի հասցեական՝ այնպես, որ բաժանորդը հնարավորություն ունենա ծանոթանալ իր ջրամատակարարման գրաֆիկին: Հրապարակված ջրամատակարարման գրաֆիկը պետք է ներառի բաժանորդին ջրամատակարարմամբ ապահովելու երաշխավորված ժամանակահատվածն, ընդ որում մինչև 17 ժամ տնտեսությամբ ջրամատակարարում ունեցող բաժանորդի ջրամատակարարումը պետք է իրականացվի ժամը 7⁰⁰-24⁰⁰-ն:

Լիցենզավորված անձը պարտավոր է ջրամատակարարման գրաֆիկի հրապարակումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ բաժանորդին հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով՝ երեք օր անընդմեջ, օրական առնվազն երկու անգամ, նվազագույնը մեկ ժամ ընդմիջումով՝ ժամը 18:00-23:00-ն ընկած ժամանակահատվածում, իրազեկել ջրամատակարարման գրաֆիկի հրապարակման ժամկետի, թերթի և իր պաշտոնական կայքի անվանումների մասին:

Սահմանված է նաև, որ Լիցենզավորված անձի սպասարկման տարածքի բոլոր բաժանորդները 2019թ. հոկտեմբերի 1-ից պետք է ունենան ամենօրյա առնվազն 6-ժամյա ջրամատակարարում, բացառությամբ «Երևան Զուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի համաձայնագրով սահմանված մատակարարի սպասարկման տարածքի գոտիների բաժանորդների, որոնք ամենօրյա առնվազն 6-ժամյա ջրամատակարարման կանցնեն 2022 թվականի հունվարի 1-ից, իսկ սպասարկման տարածքում նոր բնակավայրի ավելացման դեպքում Հանձնաժողովի կողմից սահմանվելու է այդ բնակավայրի ջրամատակարարման նվազագույն տևողության ցուցանիշների բարելավման անցումային ժամանակաշրջան:

Ջրամատակարարման ընդհատմանը և Ծառայությունների մատուցման դադարեցմանն առնչվող ցուցանիշներ.

Ջրամատակարարման ընդհատմանն առնչվող ցուցանիշները սահմանված են ըստ ընդհատումների տեսակիների: Ջրամատակարարման ընդհատումներն են պլանային ընդհատումը, վթարային ընդհատումը և ֆորս մաժորի հետևանքով ընդհատումը: Պլանային ընդհատումը պլանային աշխատանքների կատարման նպատակով ջրամատակարարման նախատեսված ընդհատումն է, իսկ վթարային ընդհատումը և ֆորս մաժորի հետևանքով ընդհատումը ջրամատակարարման չնախատեսված ընդհատումներն են:

Ջրամատակարարման ընդհատման տևողությունը չպետք է գերազանցի 36 ժամը, իսկ 500 մմ-ից մեծ տրամագծով մայրուղային ջրատարներով իրականացվող ջրամատակարարման ընդհատման դեպքում՝ 72 ժամը: Պլանային ընդհատման և վթարային ընդհատման սկզբի ժամ է համարվում հրապարակված ջրամատակարարման գրաֆիկով նախատեսված այն ժամը, որից հետո ջրամատակարարում չի իրականացվել, ֆորս մաժորի հետևանքով ընդհատման սկզբի ժամ է համարվում ֆորս մաժորի ավարտի ժամը, իսկ ջրամատակարարման վերականգնման ժամը կարող է չհամընկնել հրապարակված ջրամատակարարման գրաֆիկի հետ: Լիցենզավորված անձը պարտավոր է պահպանել պլանային ընդհատման համար նախապես հայտարարված սկզբի ժամը:

Լիցենզավորված անձը պարտավոր է հասցեի (վայրի), օրվա, սկզբի ժամի և ջրամատակարարման վերականգնման կանխատեսվող ժամի մասին, դրա իրականացման օրվանից առնվազն 3 օր առաջ, իր պաշտոնական կայքում հրապարակել նախնական տեղեկատվություն՝ մինչև պլանային ընդհատման նախորդ օրը ներառելով դրանում կատարված փոփոխությունները, իսկ ոչ շուտ, քան 2 օր առաջ տվյալ սպասարկման տարածքում հեռարձակվող առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով՝ առնվազն երկու անգամ, նվազագույնը մեկ ժամ ընդմիջումով՝ ժամը 18:00-23:00-ն ընկած ժամանակահատվածում, գրավոր, էլեկտրոնային եղանակով, հեռախոսազանգի միջոցով կամ անհատապես ծանուցման այլ եղանակով իրազեկել բաժանորդին:

Լիցենզավորված անձը պարտավոր է վթարային ընդհատման կամ ֆորս մաժորի հետևանքով ընդհատման հասցեի (վայրի), օրվա, սկզբի ժամի և ջրամատակարարման վերականգնման կանխատեսվող ժամի մասին հնարավորինս սեղմ ժամկետում իր պաշտոնական կայքում հրապարակել տեղեկատվություն, ինչպես նաև գրավոր, էլեկտրոնային եղանակով, հեռախոսազանգի միջոցով կամ անհատապես ծանուցման այլ եղանակով իրազեկել ընդհատման մասին մատակարարից հարցում կատարած բաժանորդին:

Լիցենզավորված անձն իրավունք չունի ջրամատակարարման պլանային ընդհատում իրականացնել շաբաթ և կիրակի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի համաձայն ոչ աշխատանքային օր համարվող տոներին և հիշատակի օրերին, բացառությամբ, երբ պլանային ընդհատումն իրականացնում է.

- 1) բաժանորդի դիմումի հիման վրա կամ վերջինիս հետ փոխհամաձայնեցված կարգով՝ պայմանով, որ այն չի հանգեցնի այլ բաժանորդի ջրամատակարարման հրապարակված գրաֆիկի խախտման.
- 2) համայնքի ղեկավարի գրավոր համաձայնությամբ, եթե ջրամատակարարման պլանային ընդհատումն այլ օրերին իրականացնելը կանդրադառնա պետական կամ համայնքային նշանակության կառույցների բնականոն աշխատանքի կամ միջոցառումների իրականացման ընթացքի վրա:

Լիցենզավորված անձն իրավունք ունի առնվազն մեկ օր առաջ տեղեկացնելով՝ դադարեցնել բաժանորդին Ծառայությունների մատուցումը բաժանորդի կողմից՝

- 1) մատուցված Ծառայությունների կամ մատուցված Ծառայության վերահաշվարկված քանակի դիմաց վճարման ենթակա գումարի կամ հաշվարկված տուժանքի չվճարման դեպքում Լիցենզավորված անձի կողմից գրավոր կամ էլեկտրոնային եղանակով կամ շուրջօրյա հեռախոսակապի միջոցով բաժանորդին զգուշացնելու պահից սկսած 3 աշխատանքային օրվա ընթացքում կրկին չվճարելու դեպքում,
- 2) Լիցենզավորված անձի ներկայացուցչին առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման կամ ապահովաքակցման նպատակով իր սեփականություն հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք մուտք գործել թույլ չտալու կամ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը չհաղորդելու դեպքում:

Մատակարարն իրավունք ունի հնարավորինս սեղմ ժամկետում տեղեկացնելով՝ դադարեցնել Բաժանորդին Ծառայությունների մատուցումը, եթե Ներքին ցանցի անբավարար վիճակը հանդիսանում է կամ կարող է հանդիսանալ այլ Բաժանորդի Ծառայությունների չմատուցման պատճառ: Մատակարարը պարտավոր է Բաժանորդի կողմից Ներքին ցանցի թերությունների վերացման մասին Մատակարարին իրազեկելու պահից 24 ժամվա ընթացքում վերսկսել Բաժանորդի Ծառայությունների մատուցումը:

Լիցենզավորված անձը դադարեցնում է բաժանորդին մատուցվող Ծառայությունները՝

- 1) պայմանագրի լուծման դեպքում.
- 2) բաժանորդի կողմից առևտրային հաշվառքի սարքի շրջանցմամբ միացված ներանցման խողովակի մասով՝ կազմելով արձանագրություն: Բաժանորդը պարտավոր է հատուցել Ծառայությունների մատուցման դադարեցման, այդ թվում՝ Լիցենզավորված անձի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի խախտված պահպանման գոտիների վերականգնման հետ կապված Լիցենզավորված անձի կատարած անհրաժեշտ ծախսերը: Բաժանորդի կողմից Լիցենզավորված անձի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին առևտրային հաշվառքի սարքի շրջանցմամբ կատարված միացումը բաժանորդի պայմանագրի հիման վրա մատուցվող Ծառայությունների դադարեցման համար հիմք չէ.
- 3) բաժանորդի դիմումի հիման վրա՝ բաժանորդի առաջադրած ժամկետում, բայց ոչ շուտ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում.

4) Ծառայությունների մատուցման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում, եթե բաժանորդը չունի տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթուղթ: Ծառայությունների մատուցման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի առկայության դեպքում մատուցվող Ծառայությունների դադարեցման հարցը որոշվում է վեճը օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելուց հետո:

5) օրենքով սահմանված այլ դեպքերում:

Այն դեպքում, երբ բաժանորդի առևտրային հաշվառքի սարքով Ծառայության մատուցում է ստանում այլ բաժանորդ, ապա բաժանորդին մատուցվող Ծառայության ընդհատման կամ դադարեցման դեպքում այլ բաժանորդին մատուցվող Ծառայությունը նույնպես ընդհատվում կամ դադարեցվում է:

Մատուցված Ծառայությունների կամ մատուցված Ծառայության վերահաշվարկված քանակի դիմաց վճարման ենթակա գումարի կամ հաշվարկված տուժանքի վճարումն ամբողջությամբ կատարելուց հետո Լիցենզավորված անձը պարտավոր է բաժանորդի հետ համաձայնեցված կարգով՝ բաժանորդի կողմից վճարումն ամբողջությամբ կատարելու մասին տեղեկանալու պահից 24 ժամվա ընթացքում, վերսկսել բաժանորդի Ծառայությունների մատուցումը:

Լիցենզավորված անձը չի դադարեցնում բաժանորդին Ծառայությունների մատուցումը, եթե բաժանորդը ներկայացրել է իր կողմից մատուցված Ծառայությունների կամ մատուցված ծառայության վերահաշվարկված քանակի դիմաց վճարման ենթակա գումարի կամ հաշվարկված տուժանքի Լիցենզավորված անձի համար ընդունելի պայմաններով վճարման երաշխիքներ կամ Լիցենզավորված անձի հետ կազմել է դրա մարման ժամանակացույց: Այս դեպքում բաժանորդի կողմից երաշխիքները կամ ժամանակացույցը խախտվելու դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի առնվազն մեկ օր առաջ տեղեկացնելով՝ դադարեցնել բաժանորդին Ծառայությունների մատուցումը:

Բաժանորդի Ծառայությունների մատուցման դադարեցման կարգը չպահպանելու դեպքում բաժանորդն իրավունք ունի Լիցենզավորված անձից պահանջել իր կրած վնասի հատուցում՝ օրենսդրությամբ կամ պայմանագրով սահմանված կարգով:

Շուրջօրյա հեռախոսակապին և Լիցենզավորված անձի պաշտոնական կայքին առնչվող ցուցանիշներ.

Լիցենզավորված անձը պետք ունենա բաժանորդին հասանելի շուրջօրյա հեռախոսակապ: Շուրջօրյա հեռախոսակապի միջոցով բաժանորդի դիմելու դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է իրազեկել առնվազն իր սպասարկման գրասենյակների և էլեկտրոնային կապի հասցեների մասին, որոնցով բաժանորդը կկարողանա տեղեկատվություն հաղորդել կամ ստանալ դիմումի, դրա ընթացքի, ջրամատակարարման ընդհատման պատճառի և վերականգնման ժամկետի, բաժանորդին մատուցված Ծառայությունների քանակների, դրանց դիմաց վճարման ենթակա գումարի և դրա վճարման ժամկետի, Լիցենզավորված անձի և բաժանորդի իրավունքների, պարտականությունների և այլնի վերաբերյալ:

Լիցենզավորված անձը պետք է ունենա պաշտոնական կայք, որը բաժանորդին հնարավորություն կտա տեղեկատվություն ստանալ ինչպես Լիցենզավորված անձի կողմից իրականացվող ծրագրերի, այնպես էլ ջրամատակարարման գրաֆիկի, սպասարկման գրասենյակների աշխատաժամերի, Լիցենզավորված անձի և բաժանորդի իրավունքների, պարտականությունների և այլնի վերաբերյալ: Լիցենզավորված անձը պարտավոր է գործարկել համակարգ, որը հնարավորություն կտա իր պաշտոնական կայքի միջոցով բաժանորդից ընդունել դիմում: Լիցենզավորված անձը պարտավոր է իր պաշտոնական կայքի միջոցով հնարավորություն ընձեռել բաժանորդին՝ անվճար ծանոթանալ իր Ծառայությունների մատուցմանն առնչվող առնվազն վերջին մեկ տարվա տեղեկատվությանը, այդ թվում՝ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքին և կատարած վճարմանը, գրանցման միջոցով հաղորդել առևտրային հաշվառքի սարքի նախորդ հաշվարկային ամսվա ցուցմունքը: Նշված համակարգը պետք է երաշխավորի բաժանորդի անհատական տվյալների գաղտնիությունը:

Դիմումի ներկայացմանը և քննարկմանն առնչվող ցուցանիշներ

Լիցենզավորված անձը պարտավոր է ընդունել գրավոր կամ էլեկտրոնային եղանակով, կամ շուրջօրյա հեռախոսակապի միջոցով ներկայացված դիմումները և բաժանորդի կամ դիմող անձի դիմումին պատասխանել այն եղանակով, ինչ եղանակով ստացել է:

Լիցենզավորված անձը պետք է ունենա ներքին իրավական ակտերով հաստատված՝ Ծառայությունների մատուցման գործառույթներին վերաբերվող դիմումների, այդ թվում՝ բողոքների քննարկմանը և Լիցենզավորված անձի ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց մոտ ընդունելության կազմակերպմանը վերաբերող ընթացակարգեր, որոնք պետք է տեղադրված լինեն Լիցենզավորված անձի պաշտոնական կայքում և սպասարկման կենտրոններում:

Լիցենզավորված անձը բաժանորդի կամ դիմող անձի դիմումին պարտավոր է պատասխանել այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե օրենքներով կամ Կանոններով առանձին դեպքերի համար այլ ժամկետ սահմանված չէ: Եթե բաժանորդը կամ դիմող անձը Լիցենզավորված անձին ուղղված դիմումի պատճենը հասցեագրել է նաև Հանձնաժողով, ապա Լիցենզավորված անձը պարտավոր է դիմումի պատասխանի պատճենը ուղեկցող գրությամբ ներկայացնել Հանձնաժողով: Լիցենզավորված անձը պարտավոր է սպառիչ պատասխանել դիմումին՝ հանգամանորեն ներկայացնելով դրա առնչությամբ գործող օրենսդրական դաշտը, Լիցենզավորված անձի և բաժանորդի կամ դիմող անձի իրավունքներն ու պարտականությունները:

Մատակարարը պարտավոր է բաժանորդի կամ դիմող անձի դիմումի վերաբերյալ Հանձնաժողովի հարցմանը պատասխանել 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե հարցմամբ այլ ժամկետ նախատեսված չէ:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) հարաբերություններում շահագրգիռ կողմեր են հանդիսանում նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը և Լիցենզավորված անձը, որոնց ինտերնետային կայքերն են՝

www.scws.am

www.mnp.am

www.veolia.am

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով դիմումների

(հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում ծառայությունների մատուցմանն (գործունեության իրականացմանն) առնչվող գրավոր կամ բանավոր եղանակով ներկայացված բողոք և տեղեկատվություն ստանալու հարցում) **ներկայացման և քննարկման ընթացակարգի վերաբերյալ**

Դիմումները քննարկելիս Հանձնաժողովը ղեկավարվում է [«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին»](#), [«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»](#), [«Տեղեկատվության ազատության մասին»](#) օրենքներով, [Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N°389L որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով դիմումների ներկայացման և քննարկման կարգով](#), այլ օրենքներով ու իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

Դիմումը Հանձնաժողով ներկայացվում է գրավոր և բանավոր: Գրավոր եղանակով ներկայացված դիմումը և դրա քննարկման ընթացքը գրանցվում է գրավոր դիմումների էլեկտրոնային գրանցամատյանում, իսկ բանավոր դիմումը և դրա քննարկման ընթացքը՝ բանավոր դիմումների էլեկտրոնային գրանցամատյանում: Գրավոր դիմումի վերաբերյալ պարզաբանում ստացվում է կարգավորվող անձից, իսկ անհրաժեշտության դեպքում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կազմակերպվում է քննարկում՝ որին կարող են մասնակցել (հրավիրվել) նաև Հանձնաժողովի աշխատակիցներ, անկախ փորձագետներ: Բանավոր դիմումին տրվում է բանավոր պարզաբանում՝ ներկայացման պահին կամ հնարավորինս սեղմ ժամկետում աշխատանքային կարգով հարցը քննարկվում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կամ կարգավորվող անձի հետ, և բանավոր պատասխանը ներկայացվում դիմումատուին:

2020 թվականին ջրային ոլորտի մասով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով հասցեագրված սպառողների դիմումների վերաբերյալ

Դիմումի տեսակը	Ընդամենը	Ջրամատակարարման ընդհատման վերաբերյալ	Ջրի ճնշման վերաբերյալ	Ջրի որակի վերաբերյալ	Ջրամատակարարման ցանցերի և կոյուղագծերի տեխնիկական վիճակի մասին	Առևտրային հաշվառքի սարքի ապահովաբեկման, տեղակայման, ստուգաչափման և կատարված վերահաշվարկի վերաբերյալ	Մատակարարված ծառայության դիմաց ներկայացված վճարման հաշիվների վերաբերյալ	Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին նոր միացումների վերաբերյալ	Այլ բնույթի խնդիրների վերաբերյալ	Ինչպիսի լուծում է տրվել
		Տրվել է պարզաբանում								
Բանավոր	278	69	35	3	62	18	13	30	48	278
Գրավոր	310	62	31	3	27	88	30	15	54	310
Ընդամենը	588	131	66	6	89	106	43	45	102	588

Հանձնաժողովի իրավասության շրջանակներում սպառողներին հուզող խնդիրներին և բարձրացված հարցերին արագ արձագանքելու նպատակով Հանձնաժողովի անդամների կողմից սահմանվել է քաղաքացիների ընդունելության ժամանակացույց, անհրաժեշտության դեպքում կազմակերպվում են քննարկումներ՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

**Խմելու ջրի մատակարարման խնդիրների վերաբերյալ բաժանորդների կողմից
հաճախակի տրվող հարցեր**

№	Հարց	Պատասխան
1.	Ո՞ր հեռախոսահամարով կարելի է կապ հաստատել ջրամատակարար ընկերության հետ:	Ջրամատակարար ընկերության հետ բաժանորդները կարող են կապ հաստատել հետևյալ շուրջօրյա հեռախոսահամարներով. 1-85; 011-300-185; 0 8000 00 185/ անվճար / :
2.	Ինչպե՞ս են կարգավորվում ջրամատակարարի և բաժանորդի փոխհարաբերությունները:	Ջրամատակարարի և բաժանորդների փոխհարաբերությունները կարգավորվում են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերով, <u>Կանոններով</u> , օրենքներով և այլ իրավական ակտերով:
3.	Մատակարարն ի՞նչ ժամկետներում է պատասխանում բաժանորդի կամ դիմող անձի դիմումին:	Բաժանորդի կամ դիմող անձի դիմումին մատակարարը պարտավոր է պատասխանել 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե օրենքներով կամ <u>Կանոններով</u> առանձին դեպքերի համար այլ ժամկետ սահմանված չէ:
4.	Բաժանորդն ինչպե՞ս կարող է տեղեկանալ իր ջրամատակարարման գրաֆիկին:	Ջրամատակարարման գրաֆիկը պետք է կազմվի և հրապարակվի հասցեական՝ այնպես, որ բաժանորդը հնարավորություն ունենա ծանոթանալ իր ջրամատակարարման գրաֆիկին: Մատակարարը պարտավոր է տարեկան առնվազն երկու անգամ՝ տվյալ տարվա ապրիլ և սեպտեմբեր ամիսների 15-25-ն ընկած ժամանակահատվածներում, իր պաշտոնական կայքում և բաժանորդին հասանելի առնվազն մեկ թերթում կամ հանձնաժողովի հետ համաձայնեցնելով՝ այլ տեղեկատվական միջոցով, հրապարակել բաժանորդի ջրամատակարարման գրաֆիկը՝ համապատասխանաբար մայիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ և հոկտեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ գործողության ժամկետներով:
5.	Բաժանորդն ինչպե՞ս է իրազեկվում պլանային ընդհատման մասին:	Մատակարարը պարտավոր է պլանային ընդհատման «հասցեի (վայրի), օրվա, սկզբի ժամի և ջրամատակարարման վերականգման կանխատեսվող ժամի մասին, դրա իրականացման օրվանից առնվազն 3 օր առաջ իր պաշտոնական կայքում հրապարակել նախնական տեղեկատվություն՝ մինչև պլանային ընդհատման նախորդ օրը ներառելով դրանում կատարված փոփոխությունները, իսկ ոչ շուտ, քան 2 օր առաջ տվյալ սպասարկման տարածքում հեռարձակվող առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով՝ առնվազն 2 անգամ, նվազագույնը մեկ ժամ ընդմիջումով՝ ժամը 18:00-23:00-ն ընկած ժամանակահատվածում, գրավոր, էլեկտրոնային եղանակով, հեռախոսազանգի միջոցով կամ անհատապես ծանուցման այլ եղանակով իրազեկել բաժանորդին:
6.	Բաժանորդն ինչպե՞ս է իրազեկվում վթարային ընդհատման մասին:	Մատակարարը պարտավոր է վթարային ընդհատման կամ ֆորս մաժորի հետևանքով ընդհատման հասցեի (վայրի), օրվա, սկզբի ժամի և ջրամատակարարման վերականգնման կանխատեսվող ժամի մասին հնարավորինս սեղմ ժամկետում իր պաշտոնական կայքում հրապարակել տեղեկատվություն, ինչպես նաև գրավոր,

		էլեկտրոնային եղանակով, հեռախոսագանգի միջոցով կամ անհատապես ծանուցման այլ եղանակով իրազեկել ընդհատման մասին մատակարարից հարցում կատարած բաժանորդին:
7.	Բաժանորդն ինչպե՞ս կարող է տեղեկանալ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքին ու կատարած վճարմանը և ի՞նչ է ներառվում Բաժանորդին մատուցած ծառայությունների դիմաց տրվող վճարումը հավաստող փաստաթղթում (վճարման անդորրագրում):	Բաժանորդը մատակարարի պաշտոնական կայքի միջոցով հնարավորություն ունի անվճար ծանոթանալ վերջին մեկ տարվա տեղեկատվությանը, այդ թվում՝ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքին և կատարած վճարմանը: Բաժանորդին մատուցած ծառայությունների դիմաց տրվող վճարումը հավաստող փաստաթղթում ներառված է տվյալ բաժանորդի անունը, ազգանունը, հասցեն, քարտի համարը, հաշվարկային ամիսը, առևտրային հաշվառքի սարքի նախորդ ու վերջին ցուցմունքները և դրանց գրանցման օրերը, հաշվարկային ամսում վճարած գումարը, հաշվարկային ամսում բաժանորդին մատուցված Ծառայությունների սակագինը (ներառյալ ԱԱՀ-ն), քանակը (մ3) և դրա դիմաց վճարման ենթակա գումարը (ներառյալ ԱԱՀ-ն), այդ թվում՝ տարանջատված ըստ մատուցված Ծառայությունների տեսակների, բաժանորդին մատուցված Ծառայությունների դիմաց սուբսիդիայի առկայության դեպքում հաշվարկային ամսվա համար հաշվարկված սուբսիդիայի գումարը (ներառյալ ԱԱՀ-ն), այդ թվում՝ տարանջատված ըստ մատուցված Ծառայությունների տեսակների, նախորդ տարվա նույն ամսում բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակը, հաշվարկային ամսվա սկզբին և ավարտին պարտքի մնացորդը (ներառյալ ԱԱՀ-ն), վճարման ամսաթիվը, հաջորդ հաշվարկային ամսվա ջրամատակարարման գրաֆիկով երաշխավորված ժամերը: Շուրջօրյա ջրամատակարարման դեպքում վճարման փաստաթուղթը պետք է ներառի «ջրամատակարարման գրաֆիկ՝ 24 ժամ» բառերը, իսկ մնացած դեպքերում՝ «ջրամատակարարման գրաֆիկ՝ __ ժամ» բառերը և ջրամատակարարման գրաֆիկի սկզբի և ավարտի ժամն ու ըոպեն:
8.	Ի՞նչ տեղեկատվություն է պահպանում մատակարարը բաժանորդի հաշվառման քարտում:	Հաշվառման քարտում պահպանվում են մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին բաժանորդի ներքին ցանցի միացման կետի, միացման ժամկետի, հարաչափերի, դրանց հետագա փոփոխությունների, ինչպես նաև մատուցված (վերահաշվարկված, ճշգրտված) ծառայության քանակի և դրա դիմաց հաշվարկված գումարի, հաշվարկված տուժանքի մասին ողջ տեղեկատվությունը: Հաշվառման քարտի տեղեկատվությունը մատակարարը պահպանում է պայմանագիրը լուծելու պահից առնվազն 3 տարի ժամկետով, եթե օրենսդրությամբ այլ ժամկետ սահմանված չէ:
9.	Առևտրային հաշվառքի սարք չունեցող բաժանորդի դիմելու դեպքում ի՞նչ ժամկետում է մատակարարը տեղակայում առևտրային հաշվառքի սարքը, ո՞վ է կրում դրա տեղադրման և	Առևտրային հաշվառքի սարք չունեցող բաժանորդի դիմելու դեպքում մատակարարը պարտավոր է 30 աշխատանքային օրվա ընթացքում տեղակայել առևտրային հաշվառքի սարք: Առևտրային հաշվառքի սարքի ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման (ներառյալ՝ սպասարկման, ստուգաչափման, նորոգման և պահպանման) պատասխանատու-

	շահագործման պատասխանատվությունը և սահմանված ժամկետում առևտրային հաշվառքի սարք չտեղադրելը ի՞նչ հետևանքներ է ունենում մատակարարի համար:	վոթյունն՝ անկախ դրա պատկանելությունից, կրում է մատակարարը, բացառությամբ <u>Կանոնների</u> 31-րդ և 55-րդ կետերով սահմանված դեպքերի: Մատակարարի կողմից առևտրային հաշվառքի սարք չտեղակայելու դեպքում բաժանորդին մատուցված ծառայության քանակը յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է բաժանորդին մատուցված ծառայության միջին օրական քանակի 10%-ով: Բաժանորդին մատուցված ծառայության միջին օրական քանակը հաշվարկվում է <u>Կանոնների</u> 43-րդ կետի համաձայն:
10.	Առանց առևտրային հաշվառքի սարքի ջրամատակարարման դեպքում ինչպե՞ս է հաշվարկվում բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակը:	Առանց առևտրային հաշվառքի սարքի ջրամատակարարում ունեցող բաժանորդների դեպքում, բացառությամբ <u>Կանոնների</u> 49-րդ և 49.2 կետերով նախատեսված դեպքերի՝ 1) բազմաբնակարան շենքի բնակիչ բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակը հաշվարկային ամսվա համար հաշվարկվում է 30 մ ³ , բացառությամբ <u>Կանոնների</u> 42.1 կետով սահմանված դեպքի. 2) ոչ բազմաբնակարան շենքի բնակիչ բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակը հաշվարկային ամսվա համար հաշվարկվում է 100 մ ³ , բացառությամբ <u>Կանոնների</u> 42.1 կետով սահմանված դեպքի. 3) ոչ բնակիչ բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակը հաշվարկային ամսվա յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է ներանցման խողովակի թողունակությամբ՝ շարժման 1,5 մ/վրկ արագությամբ և ջրամատակարարման հրապարակված գրաֆիկի հիման վրա հաշվարկված խմելու ջրի օրական քանակով, բացառությամբ <u>Կանոնների</u> 42.1 կետով սահմանված դեպքի. 4) եթե բաժանորդն ունի նաև առևտրային հաշվառքի սարքով ջրամատակարարում, ապա վերը նշված 1-ին և 2-րդ կետերով սահմանված դեպքերում, եթե հաշվարկային ամսվա ընթացքում առևտրային հաշվառքի սարքով մատուցված ծառայության քանակը չի գերազանցում վերը նշված 1-ին և 2-րդ կետերով սահմանված չափաքանակները, ապա առևտրային հաշվառքի սարքով մատուցված ծառայության քանակը չի հաշվարկվում, իսկ եթե գերազանցում է՝ հաշվարկվում է միայն առևտրային հաշվառքի սարքով մատուցված ծառայության քանակը:
11.	Ո՞վ է իրավասու կնքելու տեղակայված առևտրային հաշվառքի սարքը:	Մատակարարը կնքում է տեղակայված առևտրային հաշվառքի սարքը համարակալված հոլոգրաֆիկ կնիքով, որը կարող է լրացուցիչ կնքել բաժանորդը:
12.	Ո՞ր դեպքերում և ի՞նչ չափով է մատակարարը բաժանորդին կամ դիմող անձին վճարում է տուժանք:	Մատակարարը բաժանորդին կամ դիմող անձին վճարում է տուժանք. 1) <u>Կանոնների</u> 3-րդ գլխով սահմանված՝ առևտրային հաշվառքի սարքի ապահովաքանակցման, տեղակայման, ստուգաչափման կարգի կամ ժամկետի յուրաքանչյուր խախտման համար. 2) <u>Կանոնների</u> 4-րդ գլխով սահմանված՝ մատուցված

		Ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի հաշվարկման, վերահաշվարկման, վճարման կարգի կամ ժամկետի յուրաքանչյուր խախտման համար. 3) <u>Կանոնների 7-րդ</u> գլխով սահմանված՝ ջրամատակարարման ընդհատման, Ծառայությունների մատուցման դադարեցման կարգի կամ ժամկետի յուրաքանչյուր խախտման համար. 4) <u>Կանոնների 9-րդ</u> գլխով սահմանված՝ բաժանորդի դիմումին պատասխանելու կարգի կամ ժամկետի յուրաքանչյուր խախտման համար. 5) <u>Կանոնների 9-րդ</u> գլխով սահմանված՝ դիմող անձի դիմումին պատասխանելու կարգի կամ ժամկետի յուրաքանչյուր խախտման համար: Տուժանքը վճարվում է մատուցված Ծառայությունների դիմաց հաշվարկված միջին ամսական գումարի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 2000 դրամ, իսկ դիմող անձի դեպքում վճարվում է տուժանք 2000 դրամի չափով:
13.	Ինչպե՞ս է սահմանված «Սահմանազատման կետ» հասկացությունը և ու՞մ վրա է այն տարածվում:	Սահմանազատման կետը մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի այն կետն է, որին անմիջապես հաջորդում է բաժանորդի սեփականություն հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածքը (այլ բաժանորդի ներքին ցանցով ծառայության մատուցում ստացող բաժանորդի դեպքում՝ մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի այն կետը, որին անմիջապես հաջորդում է այն բաժանորդի սեփականություն հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածքը, ում ներքին ցանցով իրականացվում է ծառայության մատուցումը), իսկ բազմաբնակարան շենքի ջրամատակարարման դեպքում՝ մատակարարի ջրամատակարարման համակարգի այն կետը, որին անմիջապես հաջորդում է շենքի արտաքին պատը, բազմաբնակարան շենքի ջրահեռացման դեպքում՝ շենքի կողմից այն կետը, որին անմիջապես հաջորդում է առաջին դիտահորը, ցայտաղբյուրի դեպքում՝ ցայտաղբյուրի կողմից այն կետը, որին անմիջապես հաջորդում է առևտրային հաշվառքի սարքը, իսկ առևտրային հաշվառքի սարք տեղակայված չլինելու դեպքում՝ ցայտաղբյուրի կողմից այն կետը, որին անմիջապես հաջորդում է առաջին փականը, ժամանակավոր բաժանորդի դեպքում՝ մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին ապօրինի միացման կետը: Նշված հասկացությունը տարածվում է 2016 թվականի դեկտեմբերի 31-ից հետո նոր միացմամբ բաժանորդ դարձած անձանց վրա, իսկ մնացած բաժանորդների դեպքում սահմանազատման կետը որոշվում է համաձայն «Երևան Զուր», «Հայջրնուկոյուտի», «Լոռի-ջրնուկոյուտի», «Շիրակ-ջրնուկոյուտի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ

		գույքի վարձակալության պայմանագրի և օրենսդրությամբ սահմանված այլ իրավական ակտերի:
14.	Նոր միացման դեպքում որտե՞ղ է տեղակայվում առևտրային հաշվառքի սարքը:	Բաժանորդի սեփականություն հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածքից դուրս՝ սահմանազատման կետում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ սահմանազատման կետին հնարավոր ամենամոտ կետում: Բազմաբնակարան շենքի դեպքում առևտրային հաշվառքի սարքը կարող է տեղակայվել ներքին ցանցում՝ այդ թվում բնակարանի ներսում:
15.	Ու՞մ պետք է դիմել նոր միացման համար:	Նոր միացման համար դիմող անձը կամ, ճարտարապետահատակագծային առաջադրանք ձևավորելու փուլում՝ առաջադրանք տվող իրավասու մարմինը, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով դիմում է ներկայացնում մատակարարին՝ դիմումին կցելով անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունը:
16.	Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ֆիզիկական անձի ջրամատակարարման նոր միացումն ապահովելու համար:	▪ անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ լիազորված անձի դեպքում՝ անձր հաստատող փաստաթղթի պատճենը և լիազորագիրը, ▪ տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հաստատող փաստաթղթի պատճենը կամ համայնքի, իսկ Երևան քաղաքում՝ համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարի կողմից տրված՝ տվյալ տարածքում (շենքում, շինությունում) բնակության փաստը հավաստող փաստաթուղթ, ▪ կառուցվող (կառուցված) օբյեկտի տեղադիրքը ցույց տվող սխեմատիկ հատակագծի կամ հաստատված գլխավոր հատակագծի պատճենը, ▪ դիմումը քննության առնելու և դրան համապատասխան ընթացք տալու համար 2000 դրամի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:
17.	Ո՞ր դեպքում է գանձվում միացման վճար և ինչպե՞ս է այն հաշվարկվում:	Մատակարարի կողմից նոր համակարգը կառուցվում է միացման պայմանագրի հիման վրա: Մատակարարը դիմող անձից նոր միացման համար գանձում է միացման վճար: Միացման վճարի մեծությունը հավասար է մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման աշխատանքների իրականացման նպատակով մատակարարի կողմից դիմող անձի հետ համաձայնեցված աշխատանքների խոշորացված նախահաշվի գնին և ճշգրտվում է աշխատանքների փաստացի ավարտից հետո՝ միացման պայմանագրով սահմանված կարգով:
18.	Ինչպես է մատակարարը ապահովաբանվում առևտրային հաշվառքի սարքը:	Առևտրային հաշվառքի սարքի ապահովաբանվածության դեպքում մատակարարը՝ - արտաքին գննության արդյունքում կազմում է առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի, առևտրային հաշվառքի սարքի խախտված լինելու մասին արձանագրություն, որը ստորագրում են մատակարարը և բաժանորդը կամ նրա ներկայացուցիչը: Բաժանորդի չներկայանալու կամ արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու, կամ արձանագրության որևէ դրույթին չհամաձայնելու դեպքում այդ մասին մատակարարը

		արձանագրությունում կատարում է համապատասխան նշում՝ նկարագրելով պատճառները: Բաժանորդի չներկայանալու դեպքում մատակարարն արձանագրությանը կցում է բաժանորդին ծանուցելու մասին գրությունը: Արձանագրությունը կազմվում է երկու օրինակից՝ մեկական յուրաքանչյուր կողմի համար. -ապահավաքակցված առևտրային հաշվառքի սարքը տեղակայում է կնքվող փաթեթում, որը կարող է լրացուցիչ կնքել նաև բաժանորդը. - իր հաշվին տեղակայում է առևտրային հաշվառքի սարք, որի նույնականացման տվյալներն ամրագրվում են պայմանագրում և որը հանդիսանում է մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մաս: Բաժանորդի սեփականություն հանդիսացող ապահավաքակցված առևտրային հաշվառքի սարքը ստուգաչափումից հետո վերադարձվում է բաժանորդին՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:
--	--	---